Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 2-ի N 970 - Ն որոշման

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են այն գնահատողներին ներկայացվող չափանիշները, որոնք բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի գնահատման անհրաժեշտությունը կամ հնարավորությունը օրենքով նախատեսված լինելու դեպքում կարող են իրականացնել բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի գնահատում:

2. Գնահատողը պետք է լինի «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի իմաստով աուդիտորական կազմակերպություն, որի՝ գնահատմանը նախորդող տարվա գործունեության արդյունքներով աուդիտորական ծառայություններից հասույթը գերազանցել է 250 մլն դրամը:

3. Գնահատողը գնահատմանը նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է ծառայություն մատուցած լինի գնահատման պատվեր տվողին կամ այն ընկերությանը, որի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքը գնահատվելու է՝ ներառյալ դրանց բաժնետերերին կամ մասնակիցներին:

4. Սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված կազմակերպությունները նույնականացնելու նպատակով հիմք է ընդունվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի կայքում՝ գնահատման պատվերի տրման ժամանակ հրապարակած ցանկը, որը ենթակա է թարմացման յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ